

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ



Կիրառել գիտական հայտնագործությունների հնարավորությունները

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն այցելել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ՝ կենտրոնի գործունեությանը ծանոթանալու, գիտական հայտնագործությունները գյուղատնտեսության մեջ կիրառելու հնարավորություններն ու հեռանկարները քննարկելու նպատակով:

Այցի սկզբում նախարարը շրջել է կենտրոնում, գրուցել աշխատակիցների հետ: Ծանոթանալով կենտրոնի գիտական թանգարանում ներկայացված ցուցանմուշներին, որոնց մի մասը պահպանվել է դեռևս 19-րդ դարից՝ նախարարն առաջարկել է ուսումնասիրել այն զբոսաշրջության կենտրոնի վերածելու հնարավորությունը: Այնուհետև նախարար Իգնատի Առաքելյանը մասնակցել է ինստիտուտի ղեկավար կազմի հետ հանդիպմանը, որի ընթացքում քննարկվել են Հայաստանում կենդանաբանության և ձկնարդյունագործության զարգացման հնարավորությունները:

Կենտրոնի գիտնականներն իրենց հերթին առաջարկել են քննարկել հայկական մուֆլոնի և ընտանի ոչխարի խաչասերման հարցը: Նախարարն առաջարկել է այս ուղղությամբ ներկայացնել ծրագիր, որը կհանգեցնի ոչխարների գլխաքանակի ավելացմանն ու մսի որակի բարձրացմանը՝ նպաստելով ոչխարաբուծության ոլորտի հետագա զարգացմանը: «Այժմ Իրանում և արաբական աշխարհում հետաքրքրված են Հայաստանում ոչխարաբուծության մասնագիտացված կենտրոններ ստեղծել, և նման ծրագիրը նրանց համար նույնպես կարող է հետաքրքիր լինել», - նշել է նախարարը: Քննարկվել են նաև խեցգետնի արտադրությանը, Սևանա լճում էնդեմիկ ձկնատեսակների և խեցգետնի պաշարների ավելացման հնարավորությանն առնչվող հարցեր:

ՀԱՄԱԺՈՂՈՎ

Համագործակցության ստեղծում և փորձի փոխանակում

ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Աշոտ Հարությունյանը մասնակցել է Երևանում մեկնարկած Թռչնաբուծության միջազգային համաժողովին: Միջոցառումը կազմակերպվել է Հայաստանի թռչնաբուծության միության և Եվրասիական թռչնաբուծության ասոցիացիայի կողմից:

Համաժողովի նպատակն է՝ աջակցել թռչնաբուծության ոլորտի ներկայացուցիչների միջև սերտ համագործակցության ստեղծմանը և ոլորտում կիրառվող ժամանակակից տեխնոլոգիաների շուրջ փորձի փոխանակմանը: Միջոցառմանը մասնակցում էին նաև Եվրասիական թռչնաբուծության ասոցիացիայի նախագահ Սերգեյ Շաբաևը, ՀՀ թռչնաբուծության միության նախագահ Սերգեյ Ստեփանյանը, թռչնաբուծական սարքավորումներ, կերային հավելումներ և անասնաբուժական դեղամիջոցների արտադրողներ՝ Հայաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, Ուկրաինայից և Բուլղարիայից: «Հայաստանում թռչնաբուծությունը վերջին տարիներին աճ է գրանցել, հավկիթի տարեկան արտադրության ծավալը ներկայումս կազմում է 655 մլն, բայց ոլորտում դեռևս առկա են խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն, այդ թվում՝ թռչնամսի ինքնաբավության մակարդակի բարձրացումը, և դրանց ուղղությամբ իրականացվում են համապատասխան աշխատանքներ», - նշել է փոխնախարար Աշոտ Հարությունյանը:

Նախարարի տեղակալը նաև հավելել է, որ այժմ հանրապետությունում ծրագրեր են մշակվում՝ անասնաբուծության ոլորտում կերարտադրության զարգացման նպատակով:

Տեղեկացնելով, որ համաժողովը Հայաստանում առաջին անգամ անց է կացվել 2014 թվականից՝ ՀՀ թռչնաբուծության միության նախագահ Սերգեյ Ստեփանյանն իր հերթին հույս է հայտնել, որ միջազգային մակարդակի այս միջոցառման կազմակերպումը Հայաստանում կկրի ավանդական բնույթ:

Միջոցառման ընթացքում ներկայացվել են գեկույցներ թռչնաբուծության արդիական խնդիրների, թռչնաբուծական սարքավորումների, թռչունների կերակրման, բուժման ժամանակակից միջոցների և ոլորտին առնչվող այլ խնդիրների վերաբերյալ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Վարչապետ Կարեն Կարապետյանը կառավարությունում հանդիպել է ֆերմերային տնտեսությունների մի շարք ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվել են գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրները, զարգացման ուղիներն ու իրականացվող ծրագրերը: Վարչապետը նշել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ձևակերպել է ոլորտում առկա բոլոր խնդիրներն ու դրանց լուծումները, որպեսզի գյուղատնտեսությունը դառնա արդյունավետ ու ժամանակակից: «Մեր բոլոր ծրագրերն ուղղված են կոոպերացիաների զարգացմանը, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանը, գյուղտեխնիկայի խնդրի լուծմանը և ֆերմերային տնտեսությունների զարգացմանը: Մենք ամեն ինչ պետք է անենք, որպեսզի ֆերմեր լինելը դառնա ձեռնտու, եթե մենք ֆերմերությունը, կոոպերացիան չզարգացնենք՝ մեր գյուղատնտեսությունն ապագա չի ունենա: Այդ իսկ պատճառով, պատրաստ եմ ամեն ինչ անել, ազդակներ հաղորդել, լծակներ կիրառել, որպեսզի ֆերմերությունը լինի ձեռնտու», - ասել է Կարեն Կարապետյանը:

Անդրադարձ է կատարվել այգեգործության և անասնապահության զարգացմանը, գյուղատնտեսության ապահովագրությանը, ցանցային համակարգերի ներդրմանը, հակակարկտային համակարգերի կիրառմանը, գյուղատնտեսական տեխնիկայի կայանի կազմակերպմանը, հողագործությամբ զբաղվող գյուղացիների կենսաթոշակային ստաժի խնդիրներին և այլն: Կառավարության ղեկավարը նշել է, որ գյուղատնտեսության վաղվա օրը ապահովագրությունն է, գյուղնախարարությունը պատրաստվում է իրականացնել պիլոտային ծրագիր: Առաջիկայում ներկայացվելու է նաև բնական աղետներին հակազդելու համակարգային ծրագիր:

Անդրադառնալով գյուղատնտեսական տեխնիկայի կայանի կազմակերպմանը՝ վարչապետն ընդգծել է, որ այդ ուղղությամբ ևս իրականացվելու է պիլոտային ծրագիր: Կարեն Կարապետյանի խոսքով՝ ծրագիրը կնպաստի բարձրորակ ծառայությունների մատուցմանը, որակական և ինքնարժեքի տեսանկյունից մրցունակ՝ գյուղմթերքի արտադրությանը, միևնույն ժամանակ կապահովի հանրապետությունում առկա գյուղտեխնիկայի վերագինում, ինչպես նաև հնարավորություն կտա ֆերմերին խուսափել տեխնիկայի ձեռքբերմանն ուղղված ներդրումներից: Վարչապետը նշել է, որ կայանների գործունեությունը պետք է կառավարի մասնավորը և ավելացրել. «Մենք հաշվարկել ենք, թե ամբողջ երկիրը տեխնիկայով ապահովելու համար, որքան ներդրում է պետք, որպեսզի ՀՀ կամայական կետում գյուղատնտեսությամբ զբաղվող մարդն օգտվի այս ծառայությունից: Այդ պարագայում ինքնարժեքը կնվազի, և մեր հաշվարկով, այս բիզնեսը կլինի ծախսափակ: Պետք է ոգևորենք, ձեր մեջից դուրս գան այն մարդիկ, որոնք այս բիզնեսից հասկանում են, գաղափարը տան և ներգրավվեն ծրագրում: Մեզ պետք է, որպեսզի կայանների կառավարիչները լինեն ձեր մեջից, որովհետև պետությունը՝ որպես կառավարիչ լավը չէ»:

Անդրադառնալով առանց մշակման մնացած հողատարածքներին, որոնց սեփականատերերը գտնվում են արտերկրում՝ վարչապետը հանձնարարել է ներկայացնել նախագիծ՝ խնդիրը լուծելու հստակ առաջարկություններով: «Սեփականության իրավունքը պետք է հարգենք, բայց եթե սեփականատերն իր պարտավորությունները չի կատարում, ապա պետք է հստակ քայլեր իրականացնենք»:

Վարչապետը նշել է, որ կառավարությունը գույքագրել է յուրաքանչյուր ոլորտի հիվանդությունները, ընդգծել դրանց լուծմանն ուղղությունները և հավելել, որ բոլոր ոլորտներում և առաջին հերթին գյուղատնտեսությունում ունենք արդյունավետության պակաս:

Նամայնբային	Էջ 3
Կոոպերացիա	Էջ 5
Մասնագետի խորհուրդը	Էջ 7

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

1



«Ես իրականում հավատում եմ և համոզված եմ, որ այն ուղղությունը, որը բռնել ենք՝ ճիշտ է, որ այսպես համառորեն գնանք՝ 10 տարի հետո գալու են մեր երկիր՝ մեզնից գյուղատնտեսություն սովորելու: Այս ամենի կրողն ու ակտիվ մասնակիցը պետք է լինեք դուք: Ձեզնից ի՞նչ եմ ակնկալում, համարձակ մտքեք այս ծրագրերի տակ՝ ինտենսիվ այգի է, կաթիլային համակարգ է և այլն: Մենք պետք է համարձակորեն որակը փոխենք, մենք բացի ձեզնից ուրիշ համախոհներ չունենք», - շեշտել է վարչապետը և հավելել, որ գյուղնախարարությունն այժմ իրականացնում է նաև գոտիավորում:

«Շատ կարևոր է, որպեսզի հավատանք այն բանին, ինչ անելու ենք: 100 տոկոսով անելու ենք, ուղղակի հեռու մի գնացեք, մի մտքեք ձեր տնտեսություններ ու ձեզնով սահմանափակվեք: Մեր թիմը տրամադրված է, բայց գաղափարների գեներացիան դուք պետք է անեք», - ասել է վարչապետը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայաստանում հրթիռային հակակարկտային համակարգի ներդրում

ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի հանձնարարությամբ՝ ՀՀ արտակարգ իրավիճակների և գյուղատնտեսության նախարարությունը մեկնարկել են հակակարկտային համակարգի արդիականացման և կարկուտի դեմ պայքարի առավել արդյունավետ մեթոդների ներդրման գործընթացը:



ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանն ընդունել է Ռուսաստանի Դաշնության «ԱՆՏԻԳՐԱԴ» գիտաարտադրական կենտրոնի ներկայացուցիչներին: ՀՀ ԱԽ նախարարության պատվերով կենտրոնն իրականացրել է երկրի կարկուտավտանգ տարածքների ուսումնասիրություն, որի հիման վրա էլ ներկայացվել են հակակարկտային համակարգի արդիականացման մեխանիզմն ունի դրա հնարավորությունները: Հանդիպման նպատակն էր՝ քննարկել Հայաստանի տարածքում ավտոմատ հրթիռային տեխնոլոգիաների կիրառումը՝ կարկտահարությունից գյուղատնտեսական մշակաբույսերի վնասը մեղմելու համար: Աշխատանքային քննարկմանը մասնակցում էին նաև ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Արմեն Հարությունյանը, «Հայաերոնավիգացիա» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Արթուր Գասպարյանը և շահագրգիռ գերատեսչությունների համապատասխան ոլորտի ներկայացուցիչներ:

«ԱՆՏԻԳՐԱԴ» գիտաարտադրական կենտրոնի կոմերցիոն տնօրեն Ալի Աբշանը ներկայացրեց առաջարկվող նոր տեխնոլոգիաների ընդհանուր բնութագիրը, պաշտպանվող տարածքներում կիրառման ձևերը: Ըստ նախնական հաշվարկների՝ միջինում բերքի 5-6 %-ը վնասվում է կարկտաբեր ամպերից: Հակակարկտային հրթիռային տեխնոլոգիաները հավաքագրված են առաջատար և ժամանակակից սարքավորումներով, որոնք թույլ են տալիս 80-90 % կրճատել կարկտից բերքի վնասի չափերը: Այդ գործընթացում առաջնային նշանակություն ունեն նաև արդիականացված ռադիոլուկացիոն կայանները, որոնք հնարավորություն են տալիս ճշգրիտ օգտագործել հակակարկտային կայաններն ու ավիացիայի միջոցները: «ԱՆՏԻԳՐԱԴ» գիտաարտադրական կենտրոնը ուսումնասիրություններ է կատարել Հայաստանի տարածքում (1մլն 134 հազար հա), նախանշել կարկտաբեր առավել վտանգավոր տարածքները, կազմել անհրաժեշտ կայանների տեղադրման քարտեզը:

Նոր հակակարկտային համակարգը հնարավորինս կրճատել է մարդկային գործոնը, համակարգի անխափան աշխատանքն իրականացվում է ղեկավարման և վերահսկման միասնական կենտրոնից: Անդրադառնալով անվտանգության հարցերին՝ Ա. Աբշանը նշեց, որ հրթիռը որևէ պայթուցիկ, վտանգավոր նյութ չի պարունակում, այն վտանգ չի ներկայացնում նաև ինքնաթիռների համար, քանի որ վերջինիս գործարկման առավելագույն բարձրությունը 5-6 կմ է: Նոր համակարգի կիրառումն արդյունավետ է ոչ միայն գյուղատնտեսական ոլորտում, այլ նաև ավիացիոն ոլորտում: Կարկտավտանգավոր ամպերի պատճառով թռիչքների հետաձգման դեպքում հրթիռը կարող է ցրել այդ ամպը, սակայն դրա գործարկման համար անհրաժեշտ է ներգրավված բոլոր օդակների ճշգրիտ և կապակցված աշխատանքը: Առաջարկվող համակարգը առավել մատչելի է և արդյունավետ, որը կարող է ծառայել 15-20 տարի: Նախարար Դ. Տոնոյանը հանձնարարեց սեղմ ժամկետում ձևավորել աշխատանքային խումբ և ներկայացնել պիլոտային ծրագրի նախնական տարբերակը՝ առաջիկա հանդիպմանն առավել հստակ քննարկելու նպատակով:

ԲԲՏՄ գիտական կենտրոն

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Թռչնաբուծության զարգացման հնարավոր ուղիները

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն ընդունել է Եվրասիական թռչնաբուծների ասոցիացիայի նախագահ Սերգեյ Շաբանին, որը Հայաստան է ժամանել Թռչնաբուծների միջազգային համաժողովին մասնակցելու նպատակով: Հանդիպման նպատակն էր՝ քննարկել Հայաստանում թռչնաբուծության ոլորտի ներկա վիճակը, առկա խնդիրներն ու դրանց լուծման հնարավոր ուղիները:

Ներկայացնելով ոլորտի արդիական հարցերը՝ նախարար Իգնատի Առաքելյանը մասնավորապես կարևորել է հանրապետությունում թռչնամսի ինքնաբավության մակարդակի բարձրացումը: Անդրադարձ է կատարվել տեղական արտադրանքի մրցունակության բարձրացմանը, ոլորտում նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը, ինչպես նաև ծախսերի կրճատման միջոցով, թռչնամսի ինքնարժեքի նվազեցման հնարավորությանը: Ընդգծելով, որ այսօր Հայաստանում միջոցներ են ձեռնարկվում կերարտադրության զարգացման ուղղությամբ՝ նախարարը կարևորել է թռչնակերի ներմուծումը տեղական արտադրությամբ փոխարինելու հարցը: Կողմերը քննարկել են տեղական բաղադրիչների օգտագործմամբ, թռչնակերի վերամշակման հնարավոր եղանակները՝ առավել բարձրորակ կերերի ստացման նպատակով: Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև թռչունների գենետիկայի բարելավմանը, թռչնաբուծարանների արդյունավետ գործունեությանը վերաբերող և այլ հարցեր:

ԱՆՏԱՌՏԵՍՏՈՒԹՅՈՒՆ

Առաջարկվում է ստեղծել Հայաստանի անտառների կառավարման միասնական մարմին

ՀՀ պետական անտառային կոմիտեի ստեղծման առաջարկը քննարկվեց «Անտառի ոլորտին առնչվող օրենսդրության և կառավարման կառուցվածքի փոփոխությունների» հանրային քննարկման ժամանակ: ENPI FLEG 2 ծրագրի շրջանակներում, առաջարկվում է Կոմիտեի կառավարման տակ միավորել «Հայաստան» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ գտնվող անտառային ֆոնդի հոդերը և բնության հատուկ պահպանվող տարածքների անտառային հոդերը:

Ըստ պաշտոնական տվյալների՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայաստան» ՊՈԱԿ-ի վերահսկողության տակ է գտնվում 344,2000 հեկտար անտառային հող, որից անտառածածկ է 27,1000 հեկտարը: Այս անտառային հողերի կառավարումն իրականացվում է «Հայաստան» 19 անտառային տնտեսությունների կողմից: Բնության հատուկ պահպանվող տարածքներում՝ ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայության տակ գտնվող «Խոսրովի անտառ» և «Շիրակի» արգելոցներում, «Դիլիջան», «Սևան», «Արևիկ» ազգային պարկերում և 13 արգելավայրերում անտառային լանդշաֆտները զբաղեցնում են 110 269.2 հեկտար տարածք՝ կազմելով ԲՀՊՏ-ների ընդհանուր տարածքի 28.5 %-ը: Մասնավորապես «Կայուն Կովկաս» (SCOPE) ազգային համակարգող Արմեն Գևորգյանը դեմ հանդես եկավ Կոմիտեի ստեղծման առաջարկին՝ նշելով, որ անտառի նկատմամբ «Հայաստան»-ը վերահսկողության խնդիրներ ունի և միավորման դեպքում, այդ խնդիրները կտեղափոխվեն նաև ԲՀՊՏ-ներ, ինչը չի կարելի թույլ տալ: «Հայաստան» ՊՈԱԿ-ի տնօրեն Մարտին Մաթևոսյանն իր հերթին նշեց, որ անտառային ոլորտը լուրջ բարեփոխումների կարիք ունի: Բարեփոխումներ «Հայաստան»-ը պարբերաբար առաջարկում է, սակայն դրանք ինչ-ինչ պատճառներով չեն ընդունվում: «Օրինակ, մենք առաջարկել ենք վերհանել Անտառային օրենսգրքի և ԲՀՊՏ-ների մասին օրենքի հակասությունները և իրականացնել ինստիտուցիոնալ բարեփոխումներ: Շրջանառության մեջ դրեցինք «Անտառային ծառայության» մասին օրենքը: Ցավոք սրտի, լուծումներ չեն տրվում: Ակնհայտ է, որ անտառամերձ համայնքների բնակչությունը վառելափայտ է օգտագործում, և սպասել, որ առաջիկա տարիներին նրանք կանցնեն գազի, շատ լավատեսական է: Կարևորագույն խնդիր է՝ ապահովել օրինական ճանապարհով անտառամերձ համայնքների վառելափայտի խնդիրը», - եզրակացրեց Մարտին Մաթևոսյանը:

Քննարկվեցին նաև Հողային օրենսգրքի 25-րդ հոդվածում անտառային հողերի վերաբերյալ, «Շրջակա միջավայրի վրա ազդեցությունն ունեցող գնահատումների և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածում առաջարկվող փոփոխությունները, ինչպես նաև ՀՀ կառավարության մի շարք որոշումների փոփոխությունները: Օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխությունները ներկայացրեց «Հայաստանի անտառներ» ՀԿ-ի տնօրեն Նազելի Վարդանյանը: Քննարկումն անցկացվեց Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի Անտառային օրենսդրության կիրառման և կառավարման բարելավման (ENPI FLEG) 2-րդ ծրագրի շրջանակներում՝ Ավստրիական զարգացման գործընկերության և Համաշխարհային բանկի աջակցությամբ: ENPI FLEG 2 ծրագրի նպատակն է՝ բարելավել անտառների կառավարումը:

www.ecolur.org

ԿԱՆՔ, ՊԻՏԻ ԼԻՆԵՆՔ ...

ԽՈՆԱՐՀՈՒՄ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Օրերս, հայոց մեծ եղեռնի սրբադասված նահատակների հիշատակի տարեկիցին, ծառատունկ կազմակերպվեց Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղի բակում: Մասնաճյուղի տնօրեն, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Ալեքսանդր Հակոբյանը բուռի բակում տնկեց արծաթափայլ եղևնի:

Տարիներ կանցնեն, և մշտադալար արծաթափայլ գեղեցկուհին արդեն իր բարձր հասակով կվկայի, որ հայ ժողովուրդը կա, պիտի լինի և նոր հզոր արմատներ արձակի: Նույն ուղերձով համակված՝ վանաձորյան ագրոբուրդ ևս իր հաստատուն քայլերով կհարստացնի Լոռու տարածաշրջանի տարեգրությունը: Այս էր միջոցառման խորհուրդը, որ խոնարհման հետ միաժամանակ, հավաստում էր ապագայում ևս կայանալու անբեկանելի ձգտումը:

Ագրոբուրդի հանրույթի անդամները հայոց զոհերի հիշատակը հարգեցին նաև Վանաձորի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու բակում՝ ծաղիկներ խոնարհելով Հայոց ցեղասպանության զոհերի հուշակոթողին:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ՍԱՐՈՒԽԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՁԵՌՆԱՐԿԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿՆՊԱՍՏԵՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ

Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղը հիմնադրվել է Ք.ա. 2-1 հազարամյակներում կառուցված՝ կիկլոպյան ամրոցի հարավ-արևմտյան կողմում Ք.ա. 1-ին հազարամյակում: Ամրոցը՝ որի ավերակները նշմարվում էին Ծաղկավանքի բլրի վրա, ունեցել է սպորերկրյա թունել դեպի մոտակա գետը: Ամրոցը համարվել է Ռուսա 1-ին արքայի կողմից հիշարակված Վելակունի (Գեղարքունիք) երկրի 23 թագավորներից մեկի նստավայրը: Գյուղի տարածքից հայտնաբերվել է արտաշիսյան սահմանաքար, ինչը վկայում է, որ Արտաշես 1-ին Բարեպաշտ արքայի օրոք (Ք.ա. 189-160թթ.) այստեղ արդեն ձևավորված է եղել գյուղական համայնքը:

Միջնադարում Սարուխանը եղել է Գեղարքունիքի ամենախոշոր գյուղը, իսկ 17-րդ դարում գավառապետի նստավայրը: Գավառապետ մելիքներից հայտնի են Մելիք Փարսադանը, Մելիք Մալխասը և Մելիք Մանուչարը: Վերջինս հարևան է գյուղից արևելք ընկած լեռներին և հարակից Մանուչարի հովտին: Իր աստվածահաճո գործերով հայտնի է եղել Մխիթար Եպիսկոպոսը, ով Մելիք Փարսադանից հալածվելով՝ հաստատվել է Սևանա կղզում և նշանակվել վանահայր:

Գյուղը՝ մինչև 1928թ. կոչվել է Դալիդարդաշ, որը եղել է գյուղի հայ մելիքներից մեկի (Էհիի պապի) մականունը: 18-րդ դարի կեսերին գյուղը հիմնովին ավերվել է լեզգիների կողմից: 19-րդ դարի սկզբներին երևանի խանի ջանքերով՝ այստեղ հաստատվել են քոչվոր թաթարներ, որոնք կլիմային չդիմանալով՝ շուտով հեռացել են:

Սարուխան համայնքն այսօր ղեկավարում է ամիսներ առաջ ընտրված, Կամոյի շրջանի Սարուխան գյուղում ծնված Հովհաննես Չիչոյանը: 1987 թ. ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը, աշխատել է Մարտունու, Գավառի ծննդատների վարիչ, Գավառի ծննդատան, պոլիկլինիկայի տնօրեն: 2016 թ. ընտրվել է Սարուխան համայնքի ղեկավար:

«Պարոն Չիչոյան, Սարուխան գյուղի ներկայիս բնակիչների նախնիները որտեղից են եկել:

– Սարուխանի ներկայիս բնակիչների նախնիները՝ 116 տնտեսություն՝ 700 շնչով, եկել են Հին Բայա-

գետի Չանկիզոր (Չանկյազուր) և Սրբահան (Սուրբ Օհան) գյուղերից դեռևս 1830 թ.: 1850 թ. գյուղացիների ջանքերով բացվել է գյուղի առաջին դպրոցը, իսկ 1897թ.՝ պետական երկդասյա դպրոցը: Սարուխանցիներն աչքի են ընկել թե առաջին և թե երկրորդ աշխարհամարտերի տարիներին: Հայրենական Մեծ պատերազմին մասնակցել են 1273 սարուխանցիներ, որոնցից 440-ը չեն վերադարձել: Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Սարուխանը տվել է 3 զեներալ, 12 գնդապետ, 13 փոխգնդապետ և բազմաթիվ սպաներ:

–Այս կարճ ժամանակահատվածում, ինչ աշխատանքներ են կատարվել համայնքում:

–Վերջին ամիսների ընթացքում հասցրել ենք վերանորոգել գերեզմանոցներ տանող փողոցները, կանոնավոր կերպով անվճար, կազմակերպվում է նաև համայնքի աղքատաշնորհները: Համայնքը ընդգրկված է Հայաստանի համայնքների հանրապետական ասոցիացիայում, ինչպես նաև միջհամայնքային միավորման անդամ է:

–Բնակչության սոցիալ-կենցաղային պայմաններն ավելի բարեկեցիկ դարձնելու համար, ինչ աշխատանքներ են անհրաժեշտ իրականացնել:

–Համայնքի բնակչությունն ունի բավարար մասնագիտական ներուժ, հանգստի և առողջարանային գոտու համար կան շատ նպաստավոր պայմաններ: Առաջիկա 5 տարիների ընթացքում, նախատեսվել ենք իրականացնել տարբեր ծրագրեր: Համայնքի թիվ 1 մանկապարտեզի հիմնանորոգում, «Պալի տակ» կոչվող թաղամասում կամրջի կառուցում, համայնքի փողոցների բարեկարգում, «Գոհ ծորում» ջրամբարի կառուցում, ոռոգման ցանցի հիմնանորոգում և վերակառուցում, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ծրագրերի իրագործում, մարզադպրոցի կառուցում, շաքարի ճակնդեղի արտադրության կազմակերպում և վերամշակման գործարանի հիմնում, բազմապրոֆիլ հիվանդանոցի կառուցում՝ ժամանակակից բուժսարքավորումներով:



– Ինչ խնդիրներ կան համայնքում, որոնք առաջնահերթ լուծումներ են պահանջում:

–Որպես առաջնային խնդիր՝ պետք է նշեմ ոռոգման ջրի ներհամայնքային համակարգի վատ վիճակը, ինչպես նաև աշխատատեղերի պակասը, արտագնա աշխատանքի մեկնողների մեծ թիվը: Բնակչության հիմնական զբաղմունքն արտադրությունն է, մատուցվող ծառայությունները, առևտուրն ու արտագնա աշխատանքը: Աշխատատեղեր չլինելու պատճառով, բարձրագույն կրթությամբ շատ մասնագետներ դուրս են մնացել աշխատանքային ոլորտից:

–Կրթամշակութային ինչպիսի ուսումնական կենտրոններ են գործում:

–Համայնքում գործում են երեք միջնակարգ դպրոցներ (ՊՈԱԿ-ներ), համայնքային ենթակայության երկու մանկապարտեզ, Սարուխան գյուղի արվեստի դպրոց (ՀՈԱԿ-ներ): Սարուխան համայնքի ավագանու 2016 թ. դեկտեմբերին կայացրած որոշման համաձայն՝ 2017թ. մանկապարտեզների աշխատանքը դարձել է տասը ամիս, իսկ հաջորդ տարիներին՝ շուրջտարյա: Այսօր մանկապարտեզներն ապահովված են ջեռուցման համակարգերով:

Մանվել Կիրակոսյան

ԿՈՌՊԵՐԱՅԻՄ

ԾՐԱԳՐՈՒՄ՝ ԱԳՐՈՏՈՒՐԻՋՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ Է

«Բյուրական» գյուղատնտեսական կոոպերատիվը մասնագիտացել է չրի արտադրությունում: Կոոպերատիվը ձևավորվել է 2016 թ.-ին՝ ՀՀ Արագածոտնի մարզի Բյուրական համայնքում՝ Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացման (ENPARD) ծրագրի հետ համագործակցությամբ:

«Գյուղում ամենամեծ հիմնախնդիրն՝ արտադրված մրգի իրացումն էր: Բոլոր մրգատեսակները հիմնականում հասնում էին հաջորդաբար, և գյուղացին չէր հասցնում կազմակերպել դրանց վաճառքը: Խնդրի կարգավորման և գյուղացիներին օգնելու նպատակով, որոշեցինք ստեղծել կոոպերատիվ, որը պետք է զբաղվեր չրերի արտադրությամբ: Առայժմ կոոպերատիվն ունի 5 անդամ: Այս տարի որոշել ենք աշխատել ավելի մեծ ծանրաբեռնվածությամբ, ընդլայնել արտադրությունը», - անդրադառնալով կոոպերատիվի ստեղծման պատմությանը՝ նշում է Ծովիկ Օհանյանը:

Չրերի արտադրամասին կից՝ «Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնության» (ՕԳԱՆ) շրջանակում նախատեսվում է կառուցել ջերմատնային տնտեսություն, որտեղ մշակվելու է օրգանական ելակ: Կոոպերատիվի անդամները լիափույս են, որ մոտ ապագայում հնարավոր կլինի արտադրել նաև օրգանական չրեր՝ օրգանիկ այգիներ մշակելու պարագայում: Կոոպերատիվի գործունեությունը հետաքրքիր շարժ է մտցրել համայնքի երիտասարդների շրջանում, հիմնական գործունեության տարածքին կից այգում՝ «ԿԱԶԱ շվեյցարական մարդասիրական հիմնադրամ» խորհրդատվությամբ և աջակցությամբ երիտասարդները պլանավորում են ստեղծել ցուցադրական այգի-տաղավար, որտեղ ուսուց-



ղական նպատակով աճեցվելու են պտղատու ծառեր՝ նոր տեխնոլոգիաների կիրառմամբ, օրինակ՝ կաթիլային ոռոգում, հակակարկտային ցանցերի անցկացում, ցածրաճ ծառերի մշակում, խնամք և այլն: Այգին նպատակ ունի նաև կրթելու և տարածելու օրգանական այգեգործությունը տարածաշրջանում: Այս երեք կառույցները միասին համագործակցելով՝ կարևոր հիմք կդառնա ագրոտուրիզմի զարգացման համար: Այցելուին հնարավորություն կունենա տեսնել և մասնակցել ելակի աճեցմանը, բերքահավաքին և չրերի պատրաստման, սորտավորման և փաթեթավորման գործընթացին:

Ծովիկ Օհանյանի տեղեկացմամբ, զբոսաշրջիկների հյուրասիրության նպատակով կստեղծվեն համապատասխան պայմաններ, կգործի նաև հայկական ավանդական խոհանոց: Իսկ ֆերմերների համար կանցկացվեն ուսուցողական սեմինարներ՝ օրգանական մրգերի՝ հատապտուղների և չրերի արտադրության ճիշտ և արդյունավետ կազմակերպման նպատակով:

Նելլի Սահակյան

ԸՆԵՐԳԱՆԱՅՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒՆԻ ԻՐ ԱՌԱՋԻՆ
«ԱՐԵՎԱՅԻՆ» ՀԱՄԱՅՆՔԸ՝
ԼԵՌՆԱՄԵՐՁԸ

Հայաստանն ունի իր առաջին «արևային» համայնքը՝ Արմավիրի մարզի Լեռնամերձը: Ամբողջ համայնքի կենցաղային ջրի կարիքներն ապահովում են արևային ջրափառացուցիչները: Դրանք տեղադրված են 80 տների տանիքներին, որոնցից 25-ի վրա էլ տեղադրված են արևային ֆոտովոլտային համակարգեր:

Համայնքի բնակիչներին բաժանվել են նաև լուսադիոդային (LED) լամպեր: Համայնքը «արևային» դարձնելու համար, բյուջեից ծախսվել է 40 միլիոն դրամ, այսօրվա ասուլիսին լրագրողներին ներկայացրեց ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների փոխնախարար Հայկ Հարությունյանը:

«Այս համայնքն այժմ ամբողջովին արևային և էներգախնայող է: Ինչո՞ւ այդ աշխատանքները որոշվեց իրականացնել: Համայնքապետը պահանջում էր գազաֆիկացում: Հաշվարկները ցույց տվեցին, որ մեկ բնակչի համար ներդրումը կկազմի մոտ 1.5 միլիոն դրամ, որպեսզի գազը բերվի, հասցվի իր տուն, և ինքը տեղադրի սովորական, ամենափոքր կաթսան՝ տաք ջուր ստանալու համար: Դա բավականին մեծ ներդրում էր: Երբ այլընտրանքը հաշվարկեցինք, մեկ բնակչի հաշվով 500.000 դրամից ավելի քիչ ներդրում պահանջվեց՝ երեք անգամ ավելի մատչելի: Սկզբում բնակիչները չէին հավատում ծրագրին, բայց տեղադրելուց հետո արձագանքը բավականին դրական էր», - պատմեց Հայկ Հարությունյանը: Փոխնախարարը նշեց, որ առաջարկել են բնակիչներին ստեղծել շրջանառու ֆոնդ՝ խնայողությունների մի մասն այնտեղ ուղղելու և հետագայում իրենց ուժերով համայնքում նման ծրագրեր իրականացնելու համար:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃՈՒՑԱՆՈՒՄ

ԿԱՅԱՑԱՎ «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՐԻԵՐԱ EXPO - 2017» -Ը

Օրերս Երևան EXPO ցուցահանդեսային համալիրում կայացավ միջազգային «Կրթություն և կարիերա EXPO - 2017» միջազգային ցուցահանդեսը, որին մասնակցում էին հայաստանյան 70-ից ավելի կրթական կազմակերպություններ: Մասնակիցների թվում էին նաև ՌԴ-ից և Լեհաստանից ժամանած մի շարք բուհերի ներկայացուցիչներ: Չորսօրյա փառատոնային ներկայացուցչական ցուցահանդեսը մեծ թվով այցելուներ ունեցավ:



«Ցուցահանդեսին ներկայացրել ենք ՀԱԱՀ-ի եռաստիճան կրթության բոլոր ուսումնական ծրագրերը, ինչպես նաև՝ վարժարանը: Մեր տաղավար այցելողները մանրամասն ծանոթանում են ընդունելության կանոններին, որոշ մասնագիտությունների գծով գործող արտոնյալ կարգին: Օրինակ՝ շրջանավարտները կարող են ընդունվել՝ ներկայացնելով միայն ավարտական փաստաթուղթը: Մանրամասն ներկայացված են նաև մասնագիտությունները: Առանձնակի ուշադրություն է դարձվում հանգամանքին, թե ցանկացած մասնագիտություն որքանով է գրավիչ և կարևոր ՀՀ-ի ագրոպարենային համակարգի և երկրի տնտեսության զարգացման համար», - պատմում է ՀԱԱՀ պրոռեկտոր Վաչագան Մելքոնյանը: Ցուցադրման էին ներկայացվել նաև ուսումնաարտադրական բազայի արտադրանքը՝ թթու կաթնամթերքի հարուստ տեսակներին: Հումքի ստացման նպատակով՝ գործում է նաև անասնաֆերման: Ինժեներական կրթությունն ստացող ուսանողների գործնական աշխատանքների կատարման համար գործում է տեխնիկայի հավաքակայանը, որը համալրվել է նոր տեխնիկայով: Վաչագան Մելքոնյանի տեղեկացմամբ, առաջիկայում դարձյալ ուսանողների գործնական գիտելիքների հարստացման նպատակով, շահագործման կհանձնվի գինու արտադրամասը:

Կարեն Կարախանյանը ՀԱԱՀ-ի ագրոնոմիական ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանող է, սովորում է ագրոէկոլոգիա մասնագիտության գծով: Ուսանողը ցուցահանդեսի այցելուներին հետաքրքրությամբ պատմում է, թե ինչո՞ւ է նախընտրել ուսանումը ՀԱԱՀ-ում, և մասնավորապես՝ ինչո՞ւ է գրավիչ ագրոէկոլոգի մասնագիտությունը:

«ՀԱԱՀ-ը միակ բուհն է, որն ուսումնասիրում է ագրոպարենային համալիրը: Իսկ ագրոէկոլոգիա մասնագիտությունը ընտրել եմ, քանի որ ինձ շատ են հետաքրքրում բնապահպանական հիմնախնդիրները, կուլենայի օգտակար լինել մեր երկրի բնապահպանությանը», - նշում է ուսանողը, ապա համոզմունք հայտնում, որ հետագայում, ավարտելուց հետո, անպայման այդ ուղղությամբ կգտնի համապատասխան աշխատանք: Կարեն Կարախանյանը սովորում է գերազանց՝ անվճար հիմունքներով:

ՀԱԱՀ աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի վարիչ Լուսինե Մնացականյանը նշեց, որ այցելուներին ավելի շատ հետաքրքրում է ընդունելության կարգը, որը փոփոխվել է դեռևս նախորդ տարվանից: «Ունենք 30 մասնագիտություններ, որոնց գերակշռող մասի համար սահմանվել է

ընդունելության նոր կարգ: Ինչ վերաբերում է աշխատանքային, ապա նկատելի է, որ վերջին 2-3 տարիներին, որոշ մասնագիտությունների գծով, ավելացել է պահանջարկը», - նշում է Լուսինե Մնացականյանը: Նրա կարծիքով՝ պահանջվող մասնագետներն են ագրոնոմները, բույսերի պաշտպանները, տեխնոլոգները և այլն, քանի որ առաջ է եկել նաև սերնդափոխության խնդիրը: Լուսինե Մնացականյանը կարևորում է նաև այն հանգամանքը, որ շեշտակիորեն բարձրացել են գործատուների պահանջները: «Ի դեմս մեր շրջանավարտների՝ մենք ապացուցել ենք, որ Հայաստանում հնարավոր է ստանալ լավագույն կրթություն, դառնալ պահանջված մասնագետ: Դրա համար ընդամենը հարկավոր է ցանկություն ունենալ», - իր խոսքը եզրափակում է Լուսինեն:

«ՀԱԱՀ-ի կրթական համակարգն աչքի է ընկնում առանձնակի հետաքրքրությամբ: Ցանկություն ունեմ մասնակցել մեր համալսարանում գործող միջազգային ծրագրերին, որոնք հնարավորություն են տալիս շարունակել ուսուցումն

արտերկրում: Այդ առումով, մեր համալսարանն ունի կարևոր ներդրում, և մյուս բուհերից տարբերվում է նրանով, որ հնարավորություն է տալիս ուսանողներին կրթություն ստանալ նաև արտասահմանում՝ ավելի բարձրակարգ մասնագետներ դառնալու համար», - ասում է ՀԱԱՀ-ի ագրոնոմիական ֆակուլտետի առկա բաժնի երկրորդ կուրսի ուսանողուհի Ռուզաննա Դավթյանը, ով ապագա ագրոնոմ է:

Արդեն 17 տարվա տարեգրություն ունի ՀԱԱՀ Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնը, որը ունեցել է 500 շրջանավարտ: Ըստ վիճակագրական տվյալների՝ կենտրոնի շրջանավարտներն ունենում են 92 տոկոսով աշխատանքով ապահովվածություն: Մրցունակ մասնագետներն աշխատանք են գտնում՝ ավարտելուց հետո առնվազն 3 ամսվա ընթացքում: «Հայաստանը գյուղատնտեսական երկիր է, և հեռանկարային ոլորտներից մեկը, որը կարող ենք ներկայացնել արտերկրին, գյուղատնտեսությունն է:

Օրերս մասնագիտական ուղևորությամբ այցելել էինք Վրաստանի Հանրապետություն, եղանք գինու արտադրամասերում: Այնտեղ ներկայացրեցինք Հայաստանի գյուղատնտեսությունը և, մասնավորապես՝ գինու արտադրությունը: Ու թեև Վրաստանը գինու արտադրության գծով առաջատարներից է, սակայն հպարտորեն կարող ենք նշել, որ հայկական գինիները, որակական հատկանիշներով, չեն զիջում վրացականին», - ներկայացնում է Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի Տեխասի A&M համալսարանի մասնաճյուղի ուսանողուհի Էվլինա Ասատրյանը:

Սկսած 2014 թ.-ից, գործում է Երևանի գինու ակադեմիան, որն առանց տարիքային սահմանափակման, ապահովում է միջազգային մակարդակի կրթություն՝ գինեգործության և գինու բիզնեսի գծով: Միլվա Աթոյանը սովորում և, միաժամանակ, աշխատում է Երևանի գինու ակադեմիայում: Նրա տեղեկացմամբ, կրթօջախում դասավանդում են Գերմանիայից ժամանած դասախոսներ, ուսուցումն իրականացվում է անգլերեն լեզվով: Ակադեմիան հնարավորություն է ընձեռում ուսանողներին՝ ձեռք բերել նաև գործնական փորձ ՀՀ-ում, ԼՂՀ-ում, ինչպես նաև արտերկրում, ականատես և մասնակից լինելով գինու արտադրության ամբողջ շղթային՝ խաղողից մինչև գինու ստացումը: Ակադեմիան պատրաստում է նաև գինու համոտեղներ:

«Ընտրիր ճիշտ մասնագիտություն և կունենաս բարեկեցիկ ապագա»՝ այս կարգախոսով են առաջնորդվում գյուղատնտեսության ոլորտը ներկայացնող կրթական կազմակերպությունները:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՖԵՐՄԵՐՈՒԹՅՈՒՆ

ԽՆԴԻՐԸ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեվազ համայնքում գործող անհատ ձեռներեց Արամայիս Սահակյանի ընդանեկան ձեռնարկությունը, թռչունների ազատ պահվածքի պայմաններում, կազմակերպում է օրգանական ձվի և թռչնամսի լայնամասշտաբ արտադրություն: Ֆերմերի տեղեկացմամբ, մարզի Ոսկեվազ համայնքում և Աշտարակ քաղաքում, ինչպես նաև ՀՀ Կոտայքի մարզի Նոր Երզնկա գյուղում, փնտրեսության ընդլայնման նպատակով, առկա են գյուղատնտեսական նշանակության անասնազոմեր, շենք-շինություններ, ինչպես նաև հողամասեր, որոնց կադաստրային և շուկայական գները գերազանցում են 100 միլիոն ՀՀ դրամը:

«Հողատարածներն ու շենք-շինություններն ապահովված են խմելու և ոռոգման ջրով, ինչպես նաև եռաֆազ էլեկտրաէներգիայի մատակարարումով:

Նախատեսում ենք առաջիկա տարիներին տնտեսությունում խնամվող երևանյան կարմիր ցեղի 350 հատ աճան հավերի թիվը, սեփական ռեսուրսների հաշվին, հասցնել ավելի քան տասը հազարի՝ յուրաքանչյուր օր ստանալով շուրջ 7000 հատ օրգանական ձու և արտադրել համապատասխան քանակությամբ թռչնամիս: Կարծում եմ, ցածր տոկոսա-



դրույքով և երկարաժամկետ վարկերի տրամադրման դեպքում, արտադրության ընդարձակման ծրագիրը կիրականացվի ավելի կարճ ժամկետներում: Տնտեսությունը զբաղվում է նաև մեղվաբուծությամբ: Նախատեսում ենք ստանալ զգալի քանակությամբ մաքուր մեղր և այլ մեղվամթերքներ», - պատմում է ֆերմերը:

Նրա տեղեկացմամբ, անասնազոմերը խոզերի և խոշոր եղջերավոր կենդանիների պահվածքի համար ունեն անհրաժեշտ և բավարար պայմաններ, ուստի նախատեսում են ձեռք բերել և խնամել նաև խոզամայրեր, խոնկորներ, ցուլիկներ, իսկ առաջիկա տարիներին՝ արտադրել տասնյակ տոննաներով խոզի և տավարի միս, աջակցության դեպքում՝ նաև արտահանել դրա զգալի մասը:

Բացի վերը նշվածից, Սահակյանների ընտանիքը Ոսկեվազ համայնքում հիմնել է շուրջ 1 հա պտղատու այգի, որի քաղցրահամ միրգը՝ ծիրանը, դեղձը, սալորը, տանձն ու խնձորը, ինչպես նաև ազնվամորին, մոշն ու այլ հատապտուղները, ՀՀ Արագածոտնի մարզի ԳԱՄԿ-ի աջակցությամբ, տարիներ շարունակ վաճառվում են Երևանում՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կազմակերպած գյուղմթերքների իրացման շուկայում (Կասյան փողոց): «Առաջիկա տարիներին, անասնաբուծության զարգացմանը զուգընթաց, ծրագրել են նաև այգեպտղաբուծության զարգացման, ինչպես նաև օրգանական գյուղմթերքների արտադրելու և արտահանելու վերաբերյալ: Միայն թե լինի պետական աջակցություն», - նշում է ֆերմերը:

Նրա կարծիքով՝ հիմնախնդիրներից մեկն էլ այն է, որ գյուղական բնակավայրերում առկա շենք-շինությունները, անասնազոմերը, հողատարածքները բանկերի կողմից չեն վերցվում՝ որպես գրավի առարկա, քանի դեռ վճարված չեն վերջիններիս կադաստրային արժեքները, որոնք առեղծված թվերի են հասնում, իսկ իրենց ֆերմերային տնտեսությունը չունի համապատասխան ֆինանսական միջոցներ՝ այդ գումարը միանվազ վճարելու համար: «Ես այն կարծիքին եմ, որ մեր տնտեսությունը միակը չէ, որը կանգնել է նման խնդրի առաջ: Ես ուզում եմ տարածաշրջանում զարգացնել գյուղատնտեսությունը, սակայն դրա համար չկան անհրաժեշտ շրջանառու միջոցներ, կարծում եմ՝ խնդիրը վերանայման կարիք ունի», - հավելում է Արամայիս Սահակյանը:

Սկսվել են գարնանային աշխատանքները, և Սահակյանների ընտանիքը հույս ու հավատով շարունակում է իր գործունեությունը՝ սպասելով ոլորտում նոր, դրական փոփոխությունների:

ԿՈՈՊԵՐԱՅԻՆ

ԱՌԱՋՆԱՀԵՐԹԸ՝ ԻՐԱՑՄԱՆ ԽՆԴՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆ Է

Վայոց ձորի մարզի Ազատեկ համայնքում, դեռևս 2012 թ.-ից, գործում է «Ազատեկ գյուղատնտեսական ասոցիացիա» սպառողական կոոպերատիվը, որը ձևավորվել է 33 կանանց նախաձեռնությամբ: Կոոպերատիվի կայացմանն աջակցել են՝ «Օքսֆամ» միջազգային, «Հորիզոն» ունիվերսալ վարկային կազմակերպությունները, ինչպես նաև «ԲԻ ԷՍ ՍԻ» բիզնեսի աջակցման կենտրոնը:



Կոոպերատիվի նախագահ Սիրարփի Ավետիսյանը մասնագիտությամբ մանկավարժ է: Երիտասարդ մասնագետն իր դժվարին աշխատանքը հաճույքով համատեղում է ջերմոցային տնտեսության վարման հետ: Աճեցնում են լոլիկ, վարունգ, տաքդեղ և լոբի: Կոոպերատիվի անդամների գերակշռող մասը զբաղվում է նաև պտղաբուծությամբ,

արտադրում են տանձ, խնձոր, ծիրան, սև սալոր և ընկույզ: Ստացված միջոցը պահպանում են կոոպերատիվի սառնարանային տնտեսությունում, որը ստեղծվել է «Օքսֆամի» հայաստանյան գրասենյակի աջակցությամբ, այնուհետև, ծնունդ ապահովելով, վաճառահանում են նպաստավոր գներով: Կոոպերատիվին անդամակցող կանանց զգալի մասը զբաղվում են նաև անասնաբուծությամբ՝ համատեղ լուծելով ճյուղում առկա հիմնախնդիրները:

Ջեռուցման համակարգի բացակայության պատճառով, ծնունդ ապահովելով, ջերմատններում մշակության աշխատանքներ չեն տարվում: Սիրարփի Ավետիսյանի կարծիքով՝ կոոպերատիվի ամենամեծ խնդիրը շուկայի հեռավորությունն է, արտադրանքը հիմնականում իրացվում է մայրաքաղաքում: «Տեղում արտադրանքը վաճառվում է շատ ցածր գներով, բացի այդ, նաև շուկայի ձեռքբերման դժվարություններ կան: Շատ դեպքերում, որպեսզի արտադրված բանջարեղենը իրացման հետ կապված դժվարությունների պատճառով, չփչանա՝ ստիպված դրանք բաժանում ենք կոոպերատիվի անդամներին, վերջիններս էլ իրականացնում են դրանց վաճառքը: Կարծում եմ, իրացման գործընթացի կարգավորման հարցում առկա է պետական աջակցության անհրաժեշտությունը», - եզրահանգում է Սիրարփին: Նրա կարծիքով՝ պետք է կազմակերպվեն մեծածախ գնումներ, որպեսզի կոոպերատիվի անդամները կարողանան շոշափելի եկամուտ ստանալ իրենց աշխատանքային ներդրումից: Իրացման խնդրի կարգավորման

դեպքում նախատեսվել են ընդլայնել արտադրությունը, հարստացնել արտադրատեսականին, կատարել ներդրումներ՝ տնտեսության զարգացման նպատակով: Կոոպերատիվը տեխնիկայով համալրման կարիք ունի, առկա է նաև նոր տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտությունը: Սերմերը և սաժիլները ձեռք են բերում ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնից»՝ դարձյալ «Օքսֆամի» աջակցությամբ: Որոշել են ընթացիկ տարում ավելացնել լոլիկի ցանքատարածքները, քանի որ շուկայում բերքն անհամեմատ հեշտ է վաճառվում, նպաստավոր է նաև գինը: Բացի այդ, լոլիկի մշակաբույսերը հիվանդությունների և վնասատուների նկատմամբ ցուցաբերում են ավելի մեծ դիմադրողականություն:

«Ազատեկ գյուղը տեղակայված է բարձրադիր գոտում, բնակլիմայական նպաստավոր պայմանների շնորհիվ, ջերմոցային տնտեսության վարումը մեզ մոտ արդյունավետ է: Հովանավորների առկայության դեպքում, սիրով կավելացնենք ջերմոցների թիվը, քանի որ մեծ տարածքներ մշակելու պարագայում, եկամուտն ավելի բարձր է լինում», - իր խոհերն է կիսում Սիրարփի Ավետիսյանը: Ինչ վերաբերում է կոոպերատիվի առավելություններին, ապա նախագահի կարծիքով՝ դրանք ակնհայտ են:

«Անհատական տնտեսությունների վարման հետ համեմատած՝ համատեղ աշխատանքի արդյունավետությունն ավելի մեծ է, բացի այդ, աշխատանքները բաշխվում են կոոպերատիվի ան-

դամների միջև, իսկ նրանցից յուրաքանչյուրը հստակ գիտի իր անելիքը, որը կատարում է մեծագույն պատասխանատվությամբ», - հավելում է Սիրարփին: Ի դեպ, «Օքսֆամի» առաջարկով, կոոպերատիվն արտադրում է օրգանական գյուղմթերք: Միջազգային կազմակերպությունն այդ նպատակով կազմակերպել է սեմինարներ, աջակցել՝ մասնագետների վերապատրաստմանը:

Կոոպերատիվին անդամակցողները 20-65 տարեկան կանայք են, ովքեր ունեն տարբեր մասնագիտություններ, սակայն հաճույքով իրենց աշխատանքը համատեղում են կոոպերատիվի



աշխատանքների հետ, քանի որ, ինչպես իրենք են ասում՝ կոոպերատիվը դարձել է մեծ ընտանիք, որտեղ իրենց միավորում է փոխադարձ սերն ու հարգանքը, միմյանց աջակից լինելու պատրաստակամությունը: Կոոպերատիվի ծրագրերից մեկն էլ՝ չրի արտադրամասի հիմնումն է:

ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՆԱՅՔ

ՆՊԱՏԱԿԸ՝ ՄԱՐԴՈՒ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿԱՊԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ Է

Արդեն չորրորդ տարին է, ինչ անհատ ձեռներեց Ռիտա Մարտիրոսյանը, սեփական նախաձեռնությամբ, ՀՀ Կոտայքի մարզի Գեղարդ համայնքում, կազմակերպում է բուսական թեյերի արտադրություն, որը շուկայում հայտնի է «Ռիթեյա» ապրանքանիշով: Արտադրության կազմակերպմանն աջակցել է EMPARD ծրագիրը, որը տրամադրել է համապատասխան տեխնոլոգիական սարքավորումներ: «Ագրոլատու»-ի հյուրն է Ռիտա Մարտիրոսյանը:

Ինչպես եք կազմակերպում հումքի մթերման գործընթացը:

Այդ նպատակով հիմնականում համագործակցում ենք վայրի թեյաբույսերի հավաքչությամբ զբաղվող կոոպերատիվների հետ, որոնք գործում են հանրապետության տարբեր մարզերում: Աշխատում ենք նաև անհատների հետ: Կոոպերատիվների հետ համագործակցելու արդյունքում՝ մեր աշխատանքներն ավելի կազմակերպված բնույթ են կրում: Վերջիններս ներկայացնում ենք մեր պահանջները, որպեսզի հավաքման ժամկետները և չորացման տեխնոլոգիաները համապատասխանեցվեն մեր չափորոշիչներին: Որպեսզի ստացվի բարձրորակ արտադրանք, պետք է ունենալ լավագույն հումք: Եվ քանի որ կոոպերատիվի գործունեությունը մասնագիտացված բնույթ է կրում, հումքի որակի հետ կապված՝ որևէ խնդիր չենք ունենում, որակը լիովին բավարարում է մեր պահանջներին: Ինչպես մեր արտադրամասը, կոոպերատիվները նույն-

պես ապահովված են տեխնոլոգիական և չորացման անհրաժեշտ սարքավորումներով, այդ դեպքում՝ պահպանվում են նաև սանիտարական հիգիենայի բոլոր կանոնները: Այլ կերպ ասած՝ բավարարվում են բոլոր պահանջները, որպեսզի մեր արտադրանքին տրվի օրգանականի սերտիֆիկատ: Ներկայումս աշխատանքներ են տարվում այդ ուղղությամբ:

Իսկ ինչ աշխատանքներ են տարվում կոոպերատիվի անդամների հետ, որպեսզի բավարարվեն Ձեր ընկերության ոչ այնքան դյուրին պահանջները, քանի որ որոշել եք անցնել օրգանական արտադրության կազմակերպման:

Հաճախ հանդիպումներ ենք կազմակերպում համայնքներում գործող կոոպերատիվների անդամների հետ, ովքեր

այն բույսի նշանակության և առանձնահատկությունների մասին: Օրինակ՝ շատ կարևոր է, թե որ բույսը դժամի պետք է հավաքել, որպեսզի բավարարվեն թեյափնջի պատրաստման համար անհրաժեշտ պահանջները: Մեր առաջնահերթ խնդիրն այն է, որպեսզի ունենանք լավ մշակված հումք:

Կոնկրետ ինչ թեյաբուսակներ եք պատրաստում:

Արտադրում ենք բուսական թեյերի հավաքածուներ, որոնք ունեն նաև բուժիչ, նշանակություն: Դրանք յուրահատուկ թեյեր են և տարբերվում են շուկայում առկա մյուս թեյերից: Ես երկար տարիներ ուսումնասիրել եմ բույսերի կյանքը: Թեյաբույսերի համակցությունն արվում է այնպես, որպեսզի միմյանց

հակացուցվող բուսատեսակները չմեկտեղվեն մեկ թեյափնջում:

Իսկ ինչպես իմանալ թեյաբուսակների նշանակության մասին: Ինչ նոր տեսականի եք ուզում թողարկել:

Թեյերի նշանակության և բաղադրության մասին մանրամասն նշված է տուփի վրա: Օրինակ, ունենք «Ծաղկային եռյակ» կոչվող բուսական թեյը, որն իր մեջ ներա-



հիմնականում կանայք են: Մասնագիտական ուսուցման նպատակով, նրանց համար կազմակերպում ենք դասընթացներ, որպեսզի ճիշտ և գրագետ կատարվեն վայրի թեյաբույսերի հավաքչության աշխատանքները: Բացատրական աշխատանքներ են տարվում այս կամ

նում է Հայաստանի բնապահպանորեն մաքուր բարձր լեռնային գոտիներից հավաքված երեք տեսակի խոտաբույսերի խառնուրդ: Այն մշակված է ավանդական եղանակով՝ առանց քիմիական միջամտության: Մեր բոլոր թեյաբույսերը 100% բնական են և չեն պարունակում գունան-

յութեր, հավելանյութեր, առանձնանում են իրենց յուրօրինակ և հաճելի համով, ինչպես նաև անուշահոտ բույրով: «Ծաղկային եռյակը» օգտակար է մարսողության կարգավորման համար, ունի նաև թարմացնող և ուժեղը վերականգնող հատկություն: Շուկայում արդեն հայտնի են և մեծ պահանջարկ են վայելում «Իմունո թեյ», «Լեռնային փունջ», և այլ թեյատեսակները: Դրանք հիմնականում բարձրացնում են օրգանիզմի դիմադրողականությունը, ինքնազգացողության վրա ունենում են դրական ազդեցություն: Մեր արտադրանքի նորույթը «Թագավորական թեյն» է: Այս թեյափունջն իր մեջ պարունակում է 7 տեսակի խոտաբույսեր, որոնցից յուրաքանչյուրն ունի առանձնահատուկ նշանակություն:

Որքան աշխատադեղեր եք ստեղծում արտադրամասում և մարզերում:

Արտադրամասում ունենք 5 մշտական աշխատողներ, մեծ պատվերների առկայության դեպքում, նրանց թիվն ավելանում է: Խոտաբույսերը հիմնականում մթերում ենք ՀՀ Կոտայքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի, Սյունիքի և այլ մարզերից: Թեյաբույսերի հավաքչության գործընթացում ընդգրկված կանանց թիվը գերազանցում է 30-ը: Անհրաժեշտության դեպքում, նրանց տրվում են նաև կանխավճարներ:

Ո՞րն է Ձեր կազմակերպության գերխնդիրը:

Մեր նպատակն այն է, որպեսզի մարդը բնությունից ստանա այն ամենը, ինչ հարկավոր է իր օրգանիզմին, քանի որ մենք homo sapiens -ներ ենք (իմաստուն մարդ), պետք է անմիջական կապ ունենանք բնության հետ: Մեր թեյերն օգնում են ապահովել այդ կապը:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՏԱԼ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՐԱՐ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻՆ

«Գյուղի կին» հասարակական կազմակերպության նախագահ և «Գյուղի տարիկ» ՍՊԸ-ի հիմնադիր տնօրեն Վերա Զաքարյանը (ՀՀ Արագածոտնի մարզ, Աշտարակի տարածաշրջան) կարևորում է հայկական մոռացված կերակրատեսակների փառաբանման կազմակերպումը, որի ընթացքում երիտասարդները կարող են ճաշակել ավանդական ճաշատեսակներ, իրազեկվել հայկական կերակրատեսակների մասին:



«Երիտասարդությունն այսօր անցել է արագ պատրաստվող ուտեստների օգտագործմանը, որոնք այդքան էլ առողջարար չեն: Շատ ավելի առողջարար և համեղ են խաչի, հարիսա ճաշատեսակները, չորթանով ճաշը և այլն: Աշտարակի տարածաշրջանում ընդունված է աղ դրած կողակը պատրաստել բանջարեղենով՝ լոբով, տաքդեղով և այլն, որը մատուցվում է արիշտայով փլավի հետ: Շատ ճաշատեսակներ էլ մոռացվել են, քանի որ երիտասարդ սերունդն աստիճանաբար հեռացել է ազգային ավանդույթներից»,- իր մտահոգությունն է կիսում Վերա Զաքարյանը, ապա հավելում, որ մարդիկ շատ հաճախ հաճույքով օգտվում են չինական, ճապոնական և այլ ազգային խոհանոցներից: Մինչդեռ, դրա կողքին, պետք է պայմաններ ստեղծվեն, որպեսզի ներկայացվեն հայկական, ավանդական, մոռացված և մոռացվող ճաշատեսակները:

«Գյուղի տատիկ» ՍՊԸ-ն արտադրում է չրեր, չարազներ, սուջուխ, պլանի, ունեն շուրջ 35 անուն արտադրատեսակներ: Ավանդական եղանակով պատ-

րաստում են նաև ընկույզի, թթի, ծիրանի, հատապտղային և այլ մուրաբաներ: Ուշագրավն այն է, որ կանայք այստեղ մասնագիտացել են նաև բանջարեղենային չրերի արտադրությունում: Դրանցից պատրաստվում են նաև համեղ աղցաններ, օրինակ՝ չոր լոլիկից ստացված աղցանը, որն անվանվել է «Վերայի աղցան», աչքի է ընկնում իր յուրահատուկ համով, որին նպաստում է նաև բազմազան համեմունքների կիրառումը:

Վերա Զաքարյանը Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի (ՀԵԿԱ) անդամ է, արժանացել է «Գյուղատնտեսության ոլորտի կին հերոս» կոչման: «Ես շատ մտահոգ եմ գյուղի կանանց կյանքով և իմ հասարակական կազմակերպությունը զբաղվում է գյուղաբնակ կանանց, հատկապես՝ երիտասարդների, սոցիալական, կրթական, մշակութային, առողջապահական խնդիրների կարգավորմամբ, իրականացնում է նաև բնապահպանական ծրագրեր: «Գյուղի տատիկ» ՍՊԸ-ի աշխատանքներում ներգրավված են կանայք, քանի որ Օշական գյուղում, որտեղ գտնվում է արտադրամասը, այլ աշխատատեղեր չկան»,- պատմում է Վերա Զաքարյանը: Մրգի հասունացման սեզոնում արտադրամասում աշխատողների թիվը հասնում է 30-ի: Ինչ վերաբերում է հայկական ավանդական ուտեստների ներկայացմանը, ապա տիկին Վերան կարևորում է այդ նպատակով կազմակերպված փառատոները, ցուցահանդեսները, միջմարզային մրցույթների կազմը: «Ունենք խորովածի, տոլմայի, գաթայի, գինու, և այլ փառատոներ, սակայն բազմաթիվ մոռացված, բայց շատ առողջ ապրելակերպ ապահովող ավանդական սննդատեսակներ կան, որոնք նույնպես կարելի է ներկայացնել փառատոների միջոցով»,- նշում է Վերա Զաքարյանը, ապա հավելում, որ չի կարելի մոռացության մատնել այն ամենը, ինչ որ պահպանել են մեր նախնիները: «Դրանք հասցրել են մեր օրերը և պետք է հոգածության արժանանան»,- եզրափակում է Վերա Զաքարյանը:

Նելլի Սահակյան

ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՆԱՅԸ

«ԳՅՈՒՂԱՑԻՆ ՄՇՏԱՊԵՍ ՊԵՏՔ Է ՆՈՐ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՏԵՄՆԻ»

Տավուշի մարզի սահմանամերձ Սևքար համայնքում է ապրում Մարինե Բրուկյանը: Արդեն երկու տարի մրգերի վերամշակմամբ է զբաղվում, Սևքարի մի քանի կանանց հետ միասին աշխատում են «Անուշահամ» ՍՊԸ-ում՝ հարուկ տեխնոլոգիաներ կիրառելով մուրաբաներ և ջեմեր արտադրելու:

Դեռ մանկուց եմ աշխատել հողի հետ: Հողագործությունն էլ համարել եմ իմ մասնագիտությունը: Բայց պետք է ասեմ, որ գյուղում ծնվելը մարդուն տալիս է հողը սիրելու անբացատրելի մի զգացողություն. երբ քո այգուց, քո իսկ ձեռքերով աճեցրած բերքն ես հավաքում, դա միայն բերք չէ՝ կյանքի մի մասն է, անցած օրերիդ արդյունքը, անցած ժամանակիդ պտուղը: Արդեն 58 տարի է, ինչ ապրում եմ Սևքար գյուղում: Իմ գիտակցական կյանքի գրեթե մեծ մասն անցել է գյուղատնտեսական աշխատանքի մեջ: Կրթությունս նույնպես գյուղատնտեսական է: Ավարտել եմ գյուղատնտեսական տեխնիկում: Ամուսնացել եմ և մինչև հիմա ապրում եմ Սևքարում: Երջանիկ կանանցից եմ, ունեմ երեք աղջիկ, նրանք նույնպես Սևքարում են ամուսնացել: Արդեն 9 թոռ ունեմ՝ 3 տղա 6 աղջիկ:

Պատմում է, որ Օբսֆամի աջակցությամբ ստեղծված մրգերի և հրուշակեղենի վերամշակման արտադրամասն արդեն երկու տարի է, ինչ գործում է Սևքար գյուղում: «Մեր «Անուշահամ» ՍՊԸ-ում աշխատում են գյուղի կանայք, ես նրանցից մեկն եմ, ով իր գործը սիրով է կատարում: Նախկին ծխախոտագործուհիներս այսօր նորարարական գաղափարների կրողն ենք: Երբեք չենք վախենում նորը ստեղծելու գաղափարից, քանի որ նոր գաղափարներն իրենց հետ առաջընթաց են բերում»,- ասում է Մարինեն իր նոր աշխատանքի արդյունքը ցուցադրելով: Համոզված է, որ գյուղացին պետք է մշտապես նոր գաղափարներ տեսնի, նոր աշխատանք:

«Սևքարում այս փոքրիկ արտադրամասը նոր շունչ է տվել գյուղին, երբ ամեն առավոտ աշխատանքի եմ շտապում՝ մրգերի և հրուշակեղենի վերամշակման արտադրամաս, նկատում եմ աշխատակիցներս խանդավառությունը, թե ինչ ուրախությամբ են նրանք կատա-

րում իրենց գործը: Գյուղացին իր հողից ստացած բերքը հեշտությամբ հանձնում է գործարան, և մենք մեր սեփական հողից ստացած բերքից պատրաստում ենք մուրաբաններ, ջեմեր: Շատ համեղ են մեր պատրաստած անուշեղենները»,- ասում է Մարինեն:

Նրա խոսքով, «Անուշահամ» ՍՊԸ-ի շնորհիվ, Սևքար գյուղից 10 կին աշխատանք ունեն, մարդիկ շատ գոհ են, որ արտադրամասը հենց մեր գյու-



ղում ստեղծվեց: Սահմանամերձ գյուղի համար աշխատանք ունենալը կարևոր պայման է՝ գյուղացին չի լքի գյուղը: «Անուշահամ» ՍՊԸ-ում Մարինեն աշխատում է որպես տեխնոլոգ: Ասում է, սշխատանքի ընթացքում առաջացած հարցերին օգնության են գալիս Օբսֆամի կողմից կազմակերպված դասընթացներն ու մասնագետների խորհուրդները, որոնց ճշգրիտ հետևում է գործարանի կոլեկտիվը: Մուրաբա և ջեմ պատրաստում են նաև տան պայմաններում, սակայն գործարանային պայմաններում հատուկ տեխնոլոգիայի են անցել լավագույն արդյունք ստանալու համար լուրջ սարքավորումներով է անհրաժեշտ աշխատել: Գիտելիքի պակաս միշտ էլ կա փորձում են լրացնել աշխատանքի ընթացքում:

Նրա խոսքով, եթե չլիներ այս գործարանի հիմնումը, գյուղացիները չլին համարձակվի դիսկի դիմել և գործարան հիմնել:

«Կարծում եմ, որ խոչընդոտներ շատ կլինեին: Իսկ գումարի խնդիրը՝ միշտ մեկ քայլ հեռու է պահում նոր գաղափարների իրականացումից: Չնայած կարևորը՝ աշխատանքն է, որ այժմ ունենք»,- եզրափակում է Մարինեն:

Նաիրա Խաչիկյան

ԾՐԱԳԻՐ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ ԱՅՑ

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրի (Ծրագիր) շրջանակներում, «Գյուղատնտեսական ԾԻԳ» ՊՀ աշխատակիցներ «Արժեշտների զարգացում» (ԱՇՀ) բաղադրիչի սննդամթերքի անվտանգության մասնագետ Գեորգի Հովհաննիսյանն ու Ծրագրի սոցիալական մասնագետ Էմմա Մկրտչյանը վերջերս սոցիալական մոնիթորինգային այց կատարեցին Երևանում գտնվող «Արժեշտների զարգացում» բաղադրիչի շրջանակներում, «Քիզնեսի զարգացում մեղրի արտահանման համար» ենթածրագիրն իրականացնող «Մեր սարեր հողին» ՍՊԸ:

Այցի ընթացքում սոցիալական մասնագետի կողմից ստուգվեց իրականացվող ենթածրագրի համապատասխանությունը Ծրագրի սոցիալական երաշխիքներին՝ ըստ համապատասխան հարցաթերթի: Ընկերության ներկայացուցիչները մանրամասն պատասխանեցին «Գյուղատնտեսական ԾԻԳ» ՊՀ աշխատակիցների բոլոր հարցերին, իսկ սոցիալական մասնագետը համապատասխան խորհրդատվություն տրամադրեց



ընկերության ներկայացուցիչներին:

Ենթածրագրի շրջանակներում, գործունեություն է ծավալվում ՀՀ 6 մարզերում՝ ներառելով մեղրի արժեշտայնությունը ընդգրկված շուրջ 40 ընտանիք: Ընկերության ներկայացուցիչները նշեցին, որ

մեղվապահությունն այն ոլորտն է, որտեղ հավասարապես գործունեություն են ծավալում նաև կանայք և երիտասարդները: Հետաքրքրական է նաև ընկերության «Սահմանապահ Արջուկ» նախաձեռնությունը, որից ստացված եկամուտն ուղղվում է ՀՀ Տավուշի մարզի Բերքաբեր սահմանամերձ համայնքի կանանց խմբին և տեղական մեղվապահներին:

Հաշվի առնելով այն փաստը, որ ենթածրագիրն օգնում է նաև խոցելի խմբերի ներկայացուցիչներին, այդ թվում սահմանամերձ գյուղերի բնակչությանն իրենց արտադրանքի իրացման և լրացուցիչ եկամուտների ստեղծման հարցում՝ կարելի է արձանագրել ենթածրագրի դրական սոցիալական ազդեցությունը կանանց, երիտասարդների և բնակչության խոցելի խմբերի զբաղվածության, եկամուտների ստեղծման կամ ավելացման և հասարակական դիրքի բարելավման խնդիրների լուծման վրա:

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Տ Ա Վ Ա Ր Ի

Ա Ր Ո Տ Ա Յ Ի Ն

Պ Ա Հ Վ Ա Ծ Ք Ը

Նախապարասարումը

Նախքան կենդանիներին արոտա-յին պահվածքի փոխադրելն անհրաժեշտ է կատարել մի շարք նախապատրաստական աշխատանքներ՝ կանխարգելիչ սրսկումներ, պատվաստումներ, կտրել և մաքրել ծնունդ ընթացքում երկարած կոճակները, ոչնչացնել մաշկի տակ եղած բոռի թրթուրները: Որոշում են կենդանիների քաշը, ստուգման անհատական համարները, ցուլիկների արոտագիրացում կազմակերպելու դեպքում, մինչև արոտային պահվածքի դնելը 15-20 օր առաջ, անհրաժեշտ է դրանց ամորձատել:

Մինչև կենդանիներին արոտավայրեր փոխադրելն անհրաժեշտ է զննել արոտավայրերի վիճակը, կացատեղերը, ջրելատեղերը, անհրաժեշտության դեպքում դրանք կարգի բերել: Կառուցել ծածկեր՝ կենդանիներից ցրտից, արևի ճառագայթներից պաշտպանելու, կթի կազմակերպման համար: Մաքրել արոտավայրերը մետաղյա լարերից, ապակու կտորներից, պոլիէթիլենային պարկերից և այլն: Լավ որակի արոտավայրերը հատկացվում են մատողաշին, կթվող և հղի կովերին:

Փոխադրումն արոտային պահվածքի

Կենդանիներին արոտ հանելու ժամկետները կախված են եղանակային պայմաններից, արոտներում բուսածածկի առկայությունից: Պետք է սպասել որպեսզի հողը բավականին ամրանա ու չորանա, իսկ բուսածածկի բարձրությունը ենթալեռնային գոտում լինի 10-12 սմ, լեռնային գոտում՝ 7-8 սմ: Եթե կանաչի բարձրությունը 5 սմ-ից պակաս է, ապա տավարը չի կարող արածել:

Կենդանիներին արոտային պահվածքի պետք է փոխադրել աստիճանաբար՝ 5-7 օրվա ընթացքում, մարտողական խանգարումներից խուսափելու նպատակով: Սկզբի օրերին արածեցումը կազմակերպել 4-5 ժամ՝ հետագայում ավելացնելով: Մինչև արոտ հանելը գոմում կերակրել կոպիտ (խոտ, ծղոտ, սենած) կերակրատեսակներով, բավարար քանակությամբ թաղանթանյութի ապահովման համար, իսկ լիակթման շրջանում գտնվող կովերին տալ նաև լրացակերեր: Հորթերին արոտի հանել 4-6 ամսակա-նից ոչ շուտ:

Կենդանիների արոտային կերի օրական պահանջը կազմում է՝

Հղի ցամաք կովերի և երինջների համար՝ 45-50 կգ, 400-500 կգ կենդանի զանգվածով կթու կովերի համար՝ մինչև 8 կգ օրական կաթ տվող կովերին՝ 45-50 կգ, 10-12 կգ—50-55 կգ, 14-16 կգ—60-65 կգ, 18-20 կգ—70-75 կգ, 6-12 ամսական մատողաշի համար՝ 600 գ օրական միջին քաշաճի դեպքում՝ 16-18 կգ, 800 գ—18-20 կգ, 1000 գ—20-22 կգ:

Մեկ տարեկանից բարձր մատողաշի համար՝

600 գ օրական միջին քաշաճի դեպքում՝ 25-30 կգ, 800 գ—30-35 կգ, 1000 գ—5-40 կգ:

Արոտում կերած կանաչի քանակը որոշելու համար օգտվել ենք Խ. Երիցյանի առաջարկած մեթոդից: Ըստ դրա՝ կենդանուն կշռում են մինչև արոտի հանելը և արոտից հետո, կշռումների տարբերությունը կլինի կերած կանաչ կերի քանակը: Կանաչ կերի քանակը որոշում են նաև զոոտեխնիկական կամ հակադարձ հաշվառման մեթոդով՝ եթե կովի օրական տալիս է 10 կգ կաթ, 1 կգ կաթի համար պահանջվում է 1.2 կերի միավոր (ընդամենը՝ 12 կերի միավոր), իսկ 1 կերի միավորը ստացվում է 5 կգ կանաչից, ապա կովը ուտում է 60 կգ կանաչ: Այս հաշվարկով, եթե 1 հա—ի բերքատվությունը 60 գ է ապա մեկ կովին պետք է հատկացնել 1 հա, 50 գ-ի դեպքում՝ 1.2 հա, 40 գ-ի դեպքում՝ 1.5 հա: Արոտների բերքատվության որոշման համար ևս կան մեթոդներ. Արո-

տի տարբեր մասերում առանձնացնում են վանդակներ, ասենք 5 մ², հնձում են, կշռում և վերահաշվարկում 1 հա-ի: Օգտագործում են նաև խոտը կանաչ կերի վերածման մեթոդը, ըստ որի, եթե տվյալ արոտավայրի 1 հա-ից ստացվում է 15 գ խոտ, ապա այն բազմապատկում են 3-ով կամ 3.5-ով, ստացվում է 45 գ: Տարբեր հասակային խմբերի կենդանիների համար հաշվարկելիս՝ օգտվում են նորմաներից, ըստ որի՝ մեկ կովը հավասար է 1.2 երինջ, 1-1.5 տարեկան 2 մատողաշ և մինչև մեկ տարեկան 4 հորթ:

Արոտների օգտագործման համակարգը

Գոյություն ունի արոտների օգտագործման երկու հիմնական եղանակ՝ ազատ կամ անսիստեմ և արոտամասային կամ հերթափոխային: Ազատ կամ անսիստեմ արածեցումը՝ տնտեսական առումով ոչ արդյունավետ է: Նախիրն ազատ շրջելով արոտավայրում՝ ոչ միայն վնասում ու փչացնում է բուսածածկը, այլ նաև հոգնում, դրսևորում ցածր մթերատվություն և նույնիսկ նիհարում: Արոտամասային կամ հերթափոխային եղանակի դեպքում, արոտավայրի ամբողջ տարածքը բաժանում են մասերի և օգտագործում հաջորդական: Կախված արոտի տարածքից՝ արոտները կարելի է բաժանել 8-9 մասի և յուրաքանչյուր մաս օգտագործել 3-4 օր: Բոլոր արոտամասերն օգտագործելով հաջորդաբար՝ նախիրը նորից փոխադրվում է առաջին արոտամաս, դա տևում է 24-27 կամ 32-36 օր, որի ժամանակ արոտի կանաչը վերականգնված է լինում, և կենդանիները մշտապես ապահովված են լինում կանաչով: Արոտավայրերում կենդանիների պետք է ջրել օրական 3 անգամ, իսկ բարձրակիթ կովերին՝ 4-5 անգամ (կովերին 70-80 լ, մատողաշին 40-50 լ, հորթերին 15-20 լ): Աղով ապահովվածությունը նույնպես կարևոր է, դրա համար քարաղը դնում են կացատեղերում կամ տաշտերում:

Ցամաքի շրջանում գտնվող կովերի և երինջների կերակրումը

Հղի կովերին ժամանակին ցամաքեցնելը մեծ նշանակություն ունի ոչ

միայն կաթնատվության, կաթի մեջ յուղի և մյուս սննդարար նյութերի բարձրացման, այլև՝ առողջ սերունդ ստանալու համար: Կովերի հղիության ընթացքում աստիճանաբար տեղի է ունենում կրծի գեղձային հյուսվածքի հետաճում: Այդ պրոցեսն ավելի ինտենսիվ ընթանում է հղիության հինգերորդ ամսվանից սկսած: Կենսունակ ավելուների աճին զուգահեռ, տեղի են ունենում առաջատական հյուսվածքի նոր հատվածների առաջացում և զարգացում, որոնք առավել ինտենսիվ ընթանում են հղիության վերջին մեկուկես երկուս.5 - 2 ամիսներին, երբ արգանդում արագ աճում է նաև պտուղը: Ծննդաբերության ժամանակ կրծի գեղձային հյուսվածքը լինում է լիովին զարգացած և լակտացիայի առաջին ամսից սկսում ակտիվ գործել: Բեղմանավորման ամսաթվի հիման վրա, համաձայն հղիության օրացույցի, սահմանվում է սպասվող ծնի ժամկետը: Ցամաքեցման ժամանակը որոշելու համար հաշվի են առնում սպասվող ծնի ամսաթիվը, ցամաքի պլանավորվող ժամկետը և այլ գործոններ:

Կովերին ցամաքեցնում են 5-7 օրվա ընթացքում, իսկ այն կովերը, որոնց կիթը ցամաքեցման առաջին օրը կազմում է 15-20 կգ, ցամաքեցվում են 7-10 օրվա ընթացքում: Օրական 15-20 կգ կաթնատվությամբ կովերի կերաբաժնից ցամաքեցման առաջին օրվանից հանում հյութալի և խտացրած կերատեսակները, կերակրում են միայն խոտ: Միաժամանակ կրճատում են կթելու հաճախակա-նությունը և հետևում խնամքով կթին, առաջին երկու օրը կթում են երկու անգամ, հետո՝ մեկ անգամ:

Ամռանը՝ ցամաքեցնելու ժամանակ, կովերի կերաբաժնում չեն ներառում խտացրած կեր և քչացնում են կանաչ կերի քանակը: Կապած պահվածքի դեպքում, ավելի արագ ցամաքեցման համար, կովերին տեղափոխում են այլ տեղ: Ցամաքեցման ավարտից հետո, երբ կրծից կաթ դուրս չի գալիս, կովերին, բացի կոպիտ կերից, տալիս են նաև հյութալի և խտացրած կերատեսակներ: Վերջիններիս քանակն ավելացնելիս հետևում են կրծի վիճակին:

Կովերին ժամանակին ցամա-

Ցամաքի շրջանում գտնվող հղիկովերի կերակրման նորմաները (օրական մեկ գլխի հաշվով)

Ցուցանիշներ	Պլանային կիթը, կգ					
	3000		4000		5000	
	Կենդանի զանգվածը, կգ					
	400	500	400	500	500	600
Կերամիավոր	6.6	7.7	7.9	8.8	9.9	10.7
Փոխանակային էներգիա, ՄՋ	80	89	92	105	116	125
Չոր նյութեր, կգ	9.4	11	9.6	11	11.6	12.6
Մարսելի պրոտեին, գ	725	850	850	970	1090	1175
Յուլմ պրոտեին, գ	1115	1310	1910	1490	1675	1810
Յուլմ թաղանթանյութ, գ	2350	2750	2305	2640	2670	2900
Օսլա, գ	640	750	750	950	1175	1270
Շաքար, գ	580	680	680	775	980	1060
Յուլմ ճարպ, գ	200	230	245	280	335	365
Կերակրի աղ, գ	40	50	45	55	60	70
Կալցիում, գ	60	80	70	90	95	110
Ֆոսֆոր, գ	35	45	40	50	65	65
Մագնեզիում, գ	15.8	18.5	17.3	19.8	20.9	22.7
Կալիում, գ	53	62	58	66	70	76
Ծծումբ, գ	18	21	19	22	23	25
Երկաթ, մգ	460	540	540	615	645	750
Պղինձ, մգ	65	75	75	90	100	105
Ցինկ, մգ	330	385	385	440	495	535
Կոբալտ, մգ	5.1	5.4	5.4	6.2	6.9	7.5
Մանգան, մգ	330	385	383	440	495	535
Յոդ, մգ	5.1	5.4	5.4	6.2	6.9	7.5
Կարոտին, մգ	295	345	385	440	495	535
Վիտամին D (կալցիֆերոլ), հազ. ՄՄ	6.6	7.7	7.7	8.8	10.9	11.8
Վիտամին E (տոկոֆերոլ), մգ	265	310	310	350	395	430

քեցնելը նպաստում է՝ կրծի արտազատական հյուսվածքի նոր հատվածների առաջացմանը և զարգացմանը, կրծում որակյալ խիժի առաջացմանը. հղիության վերջին երկու ամիսներին պտղի կենդանի զանգվածի ճիշտ ձևավորմանը, հղիության վերջին շրջանում կովի միջակ սնվածություն ապահովելուն (քանի որ ծնից հետո կովերը հաճախ ի վիճակի չեն լինում ուտել անհրաժեշտ քանակությամբ կերատեսակներ և կաթի արտադրության համար օգտագործվում են օրգանիզմի սննդարար նյութերը):

Կաթնային մթերատվության վրա բացասաբար են ազդում ցամաքի կարճն և երկար շրջանները: Հղի կովին մինչև վերջին օրը կթելու հետևանքով, բացի օրգանիզմի հյուսվածից ու պտղի նորմալ զարգացման կասեցումից, տեղի է ունենում նաև հաջորդ լակտացիայում կաթնատվության խիստ նվազում: Ցամաքի շրջանի տևողությունը պետք է որոշել՝ ըստ կենդանու վիճակի, տարիքի և հաջորդ լակտացիայում սպասվելիք մթերատվության մակարդակի: Ցամաքի շրջանի տևողությունը տատանվում է 40 - 60 օրվա սահմանում: Գործնականում կովերի ցամաքեցումը սկսել բեղմնավորումից 214 օր հետո: Ցամաքեցման համար նախատեսվում է 10 օր, ցամաքի տևողությունը կազմում է 60 օր, հղիության տևողությունը՝ 284 օր, որը նախիրների համար հղիության տևողության միջին ցուցանիշ է: Նորմալ տևողությամբ ցամաքի շրջանը կովերի լիարժեք կերակրման դեպքում հնարավորություն է տալիս ապահովել կաթնագեղձի գործելու ինտենսիվություն, ստանալ կենսունակ, լավ զարգացած սերունդ և բարձր կաթնատվություն: Ցամաքի շրջանում գտնվող կովերի կերակրումը պետք է լինի կանոնավոր և նորմավորված (աղ.): Կենդանիների նորմավորված կերակրումը կատարում են ըստ խմբերի՝ հաշվի առնելով դրանց մթերատվությունը և ֆիզիոլոգիական վիճակը: Ցամաքի շրջանում գտնվող հղի կովերի և երինջների կերաբաժնի 1 կ.մ-ի հաշվով պետք է պարունակի 105-110 գ մարսելի պրոտեին, 10-11 գ կալցիում, 7-8 գ ֆոսֆոր, 40-50 մգ կարոտին:

Պլանավորվող մթերատվության և սնվածության համաձայն՝ ցամաք կովերի կերաբաժնում խտացրած կերը, ըստ սննդարարության, պետք է կազմի կերաբաժնի 20-30 %, խոտը՝ 5-6 կգ (25 - 30 %), սիլոսը՝ մինչև 10 կգ (15 - 20 %), սենածը՝ մինչև 15 կգ (30 - 35 %), արմատապտուղները՝ 10-15 կգ (10 - 15 %): 8 - 9 ամսական հղիության կովերին տրվում են միայն բարձրորակ կերատեսակներ: Նպատակահարմար չէ տալ մզուկ, տկնուց, մրուր, գարեջրի դիրտ, որովհետև դրանք կարող են առաջացնել վիժում կամ դառնալ թույլ հորթեր ծնվելու պատճառ: Նման երևույթներ են լինում նաև զասիպոլի բարձր պարունակությամբ բամբակի քուսպով կամ քուսպալյուրով, սառած սիլոսով, ճակնդեղով կամ բորբոսնած, փտած կերատեսակներով կերակրելու դեպքում: Ամռանը կովերը պետք է արոտում գտնվեն 8 ժամից ոչ պակաս:

Ծնից մինչև բեղմնավորման՝ սերվիս - շրջանի լավագույն ժամկետը միջինը 80 օր է, որի դեպքում լակտացիայի տևողությունը կազմում է 305 օր: Սերվիսի շրջանի տևողության երկարացումը տնտեսապես նպատակահարմար չէ, քանի որ լակտացիայի 305 օրից հետո օրական ստացված կաթի քանակը խիստ նվազում է: Կովերի սերվիսի շրջանի առավել ընդունելի տևողությունը, 3000 կգ կաթնատվության դեպքում, պետք է լինի մինչև 30-50 օր, 3000-4000 կգ-ի դեպքում՝ 45-60 օր, 4000-6000 կգ-ի դեպքում՝ 60-90 օր, 6000-8000 կգ-ի դեպքում՝ 90-100 օր:

Արևիկ Ազիզյան

ՀԱԱՀ, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու

ԲՈՒՅՍԵՐԻ ԱՇԽԱՐՀ

ԲԵՐԵՆԻԿԵ



Բերենիկե ցեղը պարկանում է խաճաղկավորների ընտանիքին, ընդգրկում է ավելի քան 300 տեսակ: ՀՀ բնական պայմաններում հանդիպում են մոտ 20 տեսակներ: Բերենիկե հայկականը հանդիպում է Գեղարքունիքի և Շիրակի մարզերում, պարմական Կարինի շրջանում՝ ծովի մակերևույթից 2000-3000 մ բարձրության վրա, քարքարոտ վայրերում: Բազմամյա, 5-10 սմ բարձրությամբ խոտաբույս է, ցողունը հիմքում փայտացած է, պտուկած կամ կանգնած: Տերևները փեղրավոր են, թելանման տերևիկներով, 1 սմ երկարությամբ, փայլուն կանաչ: Ծաղիկները կապույտ են կամ վարդագույն՝ նույնպես փայլուն: Դիմացկուն, քիչ պահանջկոտ բույս է, հարմար է չիմապառ փարածքներ ձևավորելու համար:

Գրականության մեջ նկարագրված է մի շատ ուսանելի իրողություն: 1805թ. Կարլսրուեի Բուսաբանական այգում սկսել էին մշակել բերենիկե պարսկականը, որը կարող է ծաղկել նույնիսկ ձմռանը: Մի քանի տասնամյակ անց բույսը տարածվել է Եվրոպայի ողջ տարածքի վրա, իսկ մեր օրերում հանդիպում է ամենուր:

Բուժիչ հատկություններ ունեն բերենիկե անտառայինը (*Veronica chamaedrys*) և բերենիկե բժշկականը (*V. officinalis*):

Բերենիկե բժշկականի հայրենիքը Եվրոպան է և Կովկասը, տարածված է ՀՀ ցածրադիր, լեռնային և նախալեռնային շրջաններում, աճում է խոնավ վայրերում, թփուտներում և լուսավոր անտառներում: Բարձրությունը հասնում է 10-30 սմ-ի, ունի սողացող կոճղարմատ, բարձրացող կամ սողացող ցողուն: Տերևները եզրերում ատամնաձև կտրատված են: Ծաղիկները կապույտ են, ունեն չորս թերթիկ, հավաքված են ուղիղ կանգնող ողկույզներով: Ծաղկում է ապրիլ-հուլիս ամիսներին, մեղրատու բույս է՝ 1 հա հոծ մացառուտի բերքատվությունը 200-220 կգ է, մեղրը շատ որակյալ է:

ԽՈՍՈՒՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Բույսի գիտական անվանումը բաղկացած է երկու բառերից, *Vera* և *unica*, թարգմանաբար՝ «միակ կամ իրական դեղ»: Բույսն անվանում են նաև «Եվրոպական թեյ», հատկապես ֆրանսիացիներն ավելացնում են այն դեղաբույսերից ստացված գրեթե բոլոր պատրաստուկների մեջ: Միջնադարում բույսը կիրառվել է՝ որպես խորխաբեր միջոց՝ հազի դեղ: Նախկինում բույսը լայնորեն օգտագործվել է գիտական բժշկությունում:

Պարունակում է դաբաղող և դառը նյութեր, խեժ, սապոնիններ, եթերային յուղ, բույսին բնորոշ գլիկոզիդներ, օրգանական թթուներ, մինչև 230 մգ վիտամին C (100 գ հումքի մեջ), կարոտին: Բերենիկեն չի պարունակում թունավոր նյութեր, որի շնորհիվ լայնորեն կիրառվում է դեղաբուսային խառնուրդների մեջ: Որպես բուժիչ հումք՝ մթերում են բույսի վերգետնյա մասը՝ ծաղկման շրջանում:

Անգինա. 2 ճ/գ բերենիկեի խոտը 30 րոպե թրմել 200 մլ եռացրած ջրում, կատարել ողողում: Խորհուրդ է տրվում թրմել բերենիկեի և վաղենակի, երիցուկի, խնկածաղկի, գետնամուրու տերևի խառնուրդը՝ 2 ճ/գ՝ 200 մլ եռացրած ջրում: Կարելի է վերցնել նշված բույսերից մեկը

կամ մի քանիսը:

Մրսածություն, չոր հազ, բրոնխիտ. կարելի է խմել բերենիկեի թուրմը, սակայն ավելի արդյունավետ է, եթե այն խառնել ուրցի, խնկածաղկի, ջղախոտի, երեքնուկի, տատրակի, լոռասերմի հետ: 2 ճ/գ հումքը կես ժամ թրմել 300 մլ եռացրած ջրում, քամել: Խմելուց առաջ թուրմը խառնել եռացրած ջրի հետ (1:1), խմել 200-ական մլ, օրը 5-6 անգամ, 1 թ/գ մեղրի հետ:

Բրոնխների ասթմա. խմել բերենիկեի և լոռասերմի խառնուրդի (1:1) թուրմը: Պատրաստել նույն չափաբաժիններով, խմել օրը 2-3 անգամ:

Լյարդի հիվանդություններ. խմեք բերենիկեի և կատվատուտիկի, սագամատնունու կամ լոռասերմի խառնուրդի թուրմը (2 ճ/գ՝ 200 մլ եռջուր, 60-ական մլ՝ օրը 3 անգամ):

Երիկամների քրոնիկ բորբոքում. խառնել բերենիկեի և մատիտեղ թռչնի խոտերը (1:1): 1 ճ/գ հումքը 6 ժամ թրմել 200 մլ ջրում, դնել թույլ կրակի վրա՝ մինչև հասնի եռման ջերմաստիճանի, քամել: Խմել 1-ական ճ/գ՝ նախաճաշից առաջ:

Միզաքարային հիվանդություն, հողատապ. խառնել բերենիկեի, ձիաձետ դաշտայինի, ուրցի խոտերը (1:1:1): Պատրաստել և խմել՝ ինչպես նշված է նախորդ դեղատոմսում: Այս դեպքում օգտակար է ավելացնել նաև կեչու տերևը, սագամատնունու խոտը, հապալասի տերևը:

Շաքարային դիաբետ. բերենիկե բժշկականից ստացված պատրաստուկներն իջեցնում են շաքարի պարունակությունն արյան մեջ, օգտակար են հիվանդության նախնական փուլում: 2 ճ/գ խոտը 2 ժամ թրմել 500 մլ եռացրած ջրում, քամել: Խմեք 100-ական մլ, օրը՝ 5 անգամ:

Օնկոլոգիա. բերենիկեն ունի հակաուռուցքային հատկություն, վերջերս պարզվել է, որ այն կարող է կանխարգելել, նույնիսկ, չարորակ ուռուցքների զարգացումը, ինչի շնորհիվ, խորհուրդ է տրվում կիրառել՝ որպես օժանդակ միջոց, հակաուռուցքային թերապիայի ընթացքում:

Բարձր քրտնարտադրություն. 4 ճ/գ խոտը թրմել 1 լ եռացրած ջրում, ավելացնել լոգանքի ջրին: Բերենիկեն ունի նաև ցավազրկող, արյունաբեղ, հակամանրէ, վերքամոքիչ, հակաբորբոքային, կապող հատկություններ: Բույսի մատղաշ տերևներն ուտելի են: Ծաղիկներն օգտագործում են իսպանական «Մադերա» գինու, լիքյուրների, որոշ տեսակի կոնյակների արտադրությունում:

Լիլիթ Գասպարյան

Ուսուցում

ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԿԱՆԱՅ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

2017թ. ապրիլի 22-23-ը Կանաչ ուսուցման կենտրոնում անցկացվեց ուսուցում ուսուցանողների համար թեմայով:



Ուսուցման մասնակցեցին թվով 15 գյուղի կանանց խմբերի ներկայացուցիչներ՝ ՀՀ բոլոր մարզերից, ովքեր ընդգրկված են «Գյուղական Կանանց Խմբերի տնտեսական հզորացում կարողությունների զարգացման միջոցով» ծրագրում: Ուսուցումից հետո, մասնակիցները կկիսեն իրենց ստացած գիտելիքներն ու հմտությունները կանանց խմբի մյուս անդամների հետ: Ուսուցման նպատակն էր՝ քննարկել այն խնդիրները, որոնք ծառացել են կանանց առջև իրենց գործունեության ընթացքում, ինչպես նաև վերլուծել նրանց ձեռքբերումները, բարձրացնել կանանց իրազեկվածությունն իրենց քաղաքական դերի մասին, իրենց Համայնքների զարգացման գործում, ինչպիսի ներդրումներ պետք է անեն՝ իրենց համայնքներն ավելի էգալիտար և ծաղկուն դարձնելու համար:

Դասընթացավարը, ներգրավելով նաև մասնակիցներին, վերլուծեց այն գործոնները, որոնք մեծ ազդեցություն ունեն գեղերային տարբերության համար: Ներկայացումները, ինքնուրույն աշխատանքը և վարժությունները կազմում էին ուսուցման անբաժանելի մասը, որոնք օգնեցին մասնակիցներին, առավել լավ հասկանալ մատուցվող նյութը և գնահատել իրենց ուժեղ և թույլ կողմերը: Մասնակիցներին տրվեցին նաև վկայականներ:

«Գյուղական Կանանց Խմբերի տնտեսական հզորացում կարողությունների զարգացման միջոցով» ծրագիրն իրականացվում է «Կանաչ արահետ» գյուղատնտեսության աջակցության ՀԿ-ի կողմից ՄԱԿ-ի՝ Կանանց հարցերով զբաղվող գրասենյակի Գեներային հավասարության հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

Կանաչ արահետ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարգելի քաղաքացիներ,

Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք գանգահարել 011 52 48 34 հեռախոսահամարով:

Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ «Նոյան Տապան» և «Բուկինիստ» գրատներում:



ՇԱՐՈՒՆԱՎՈՐՈՒՄ Է 2017 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«ԱԳՐՈՐԱՏՈՒ» թերթ
1 համարի գինը՝ 120 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 տարվանը՝ 3960 դրամ

«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագիր
1 համարի գինը՝ 1350 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 տարվանը՝ 8100 դրամ

Թաժանորդագրությունը իրականացնում են՝
 ✓ Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները
 ✓ «Նախիտ»,
 ✓ «Յայմաուլ»,
 ✓ «Պրես-Արտաշես»
 կազմակերպությունները